


3407

281  
L-449805

Printed in Turkey



ԱՐԲԱԶԱՆ ՏԵԱՌ ՄԵՐՈՅ

Երևանի ԺԳ.Ի

## ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՆԱԽԱԲՆԱՄՈՒԹԵԱՄ

## ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

# ԱՊԱՔԵԼԱԿԱՆ

# ԹԱԿՆԱԾ

ՅԱ.ՂԱ.Գ.Ս

## ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

ԵՊԵՑԱԿԱՆ ԿԱՐԴԱՀԱՅՐՈՒԹԵԱՆ

ԱՅԵՒԵԼԵՎԱՅՅՅ

1895


2001

201

Hildegard

281 w/  
L-44

23122



# ԼԵՂՈՅ

## ԵՊԻՍԿՈՊՈՂՈՅ

ԾԱՐԱՅ

ԾԱՐԱՎԻՑՆ ԱԱՏՈՒԻՇՈՅՑ

## Ի Յաւերժական Ցիշատակ

**Ս**րեւելեան Եկեղեցեաց արժանաւորութիւնն՝ հինաւուրց և միանդամայն հոյակապ յիշատակներով մեծարդի ընծայեալ՝ բոլոր քրիստոնեայ աշխարհին մէջ մեծ յարդանք և փառք կը վայելէ։ Անոնց մէջ ապաքէն մարդկային փրկութեան ծագումն՝ Աստուծոյ մարդասիրագոյն խորհրդովն ծագելով, արագ արագ այնչափ աճեցաւ՝ որ առաքինութեան և մարտիրոսութեան, վարդապետութեան եւ որբութեան փառաց հանդէսք առաջին շրով անդ ծագկեցան և կենարար պտղոց ա-

753  
3

ռաջին զուարթութիւնն անոնք ընծայեցին։ Ապա ա-  
նոնցմէ յրդութիւն մեծամեծ բարեաց ուրիշ ժողովրդոց  
մէջ լայնասկիւռ ծաւալեցաւ սքանչելապէս, երբ երա-  
նելին Պետրոս՝ պետ առաքելական դասուն՝ մոլորու-  
թեանց և մոլութեանց բազմապատիկ չարութիւնը փա-  
րատելու համար, Աստուածային ճշմարտութեան ըյուր,  
խաղաղութեան Աւետարանը, Քրիստոսի աղատութիւ-  
նը, ի Քաղաքն տիրուհի աղանց բերաւ երկնային ակն-  
արկութեամբ։

Այլ արեւելեան Եկեղեցեաց՝ Հռովմէական Եկե-  
ղեցին մանաւանդ գլուխն ամենայն Եկեղեցեաց, ան-  
դստին առաքելոց ժամանակէն ի վեր, ո՞րչափ պատիւ  
և սէր սովոր էր արդարել ընծայել և ո՞րչափ անոնց  
փոխադարձ հաւատարիմ մեծարանօքն ուրախանալ.  
ապա այնուհետեւ իսկ, այլ և այլ դժոնդակ ժամանակ-  
ներու մէջ բնաւ երբեք չէ դադրած նախահոգ խնա-  
մով և բարերարութեամբն զանոնք իրենց արկածնե-  
րուն մէջ ի վեր կանգնելէ, միացեալները սերտ պա-  
հելէ և բաժանեալներն անդրէն վերստին առ ինքն կո-  
չելէ ։ Խը արթուն հոգածութեան յետին հանդէսն չե-  
ղաւ հոկել՝ որ իւրաքանչիւր արևելեան աղդին սեփա-  
կան սովորութիւններն և սրբաղան պաշտամանց ձե-  
ւերն, զօրս իւր իշխանութեամբն և խմաստութեամբ  
օրինաւոր հոչակած էր, միշտ անեղծ և անլիմար  
պահուին և պաշտամանուին ։ ասոր ապացոյց շատ մը  
բաներ կան՝ զորս նախնի Քահանայապետը և մանա-  
ւանդ բարեյիշատակ Պիոս Թ, կամ ինքեանք իրենց  
գործովն և կամ քրիստոնէական հաւատոյ տարածման  
Ա. Ժողովոյն ձեռօք մեծագոյն խմաստութեամբ սահ-  
մանած են։

Ոչինչ նուաղ եռանդէ և Մեր շարժեալ և մը-  
եալ՝ ի սկիզբն իսկ անդ Մեր Քահանայապետութեան՝  
Արեւելեան քրիստոնեայ աղդաց վրայ խանդակաթ-  
կաթողին սիրով դարձուցինք մեր աչքերը ։ Փութացինք  
ապաքէն Մեր խնամքն յաճախել անոնց պէտքերը թե-

թեցնելու համար, և այնուհետեւ իսկ ուրիշ պատեհ  
ժամանակներ գտանք Մեր բարեսիրութիւնն արդ-  
եամբ, ցուցաւնելու ։ Սակայն ոչինչ արդարեւ առաւել  
սիրելի և նուիրական եղած է և է Մեզ՝ քան հոդ իներն  
Առաքելական Աթուոյն հետ սերտիւ միացնելով անոնց  
մէջ այնպէս վառել արծարծել հաւատոյ եռանդն և  
բեղմնաւորութիւնը՝ որ ջանան նկրտին իրենց նախ-  
նեաց գերազանցութեանն և փառաց հասնելու՝ ա-  
նոնց օրինակներն անդրէն վերստին հանդիսացնելով։

Արդէն կարելի եղաւ Մեզ այդ Եկեղեցեաց ինչ ինչ  
նպաստներ ընձեռել ։ Այս քաղաքիս մէջ իսկ չայ և Մա-  
րոնի կղերիկոսաց դաստիարակութեանը համար Աւ-  
սումնարաններ հաստատեցինք ։ Նոյնպէս նաև ի Փիլի-  
պուղովիս և յԱղբիանուղովիս՝ Բուլգարաց համար ։  
որոշեցինք յԱթէնս Լեռնեան վարժարան մը կանդ-  
նել, մեծապէս նպաստամատոյց ենք և Ս. Աննայի կը-  
գերանոցին, որուն կառուցմանը ձեռնարկուած է յԵ-  
րուսաղէմ'Յոյն Մեզի կղերին կրթութեանը համար ։  
Մտադիր ենք դարձեալ Աւրբանեան վարժարանին մէջ  
Ասորի աշակերտաց թիւն աճեցնել, և Յունաց Աթա-  
նասեան վարժարանը՝ ուստի շատ մը երեւելի և հո-  
յակապ անձինք ելան, վերածել Գրիգորի ԺԴի, մեծա-  
պարդեւ հիմնադրին, իմաստութեամբ յառաջադրած  
նախնի նպատակին ։ Արդարեւ շատ մը այսպիսի և  
սոյն օրինակ բաներ փորձել և կատարել կարենալ կը  
փափաքինք, առաւել ևս եռանդնալից կամօք այժմ՝  
որ, օգնութեամբն Աստուծոյ, ի գլուխ հանեցինք  
Մեր ի վաղուց հետէ երկնած խորհուրդը՝ հրաւիրելու  
առանձինն թղթով համօրէն իշխաններն և ժողովուրդ-  
ները յերջանիկ միութիւն աստուածային հաւատոյ ։  
Ապաքէն դժբաղդութեամբ բաժանեալ քրիստոնեայ  
աղդաց մէջ ջանացինք նախ և յառաջ Արեւելեաններն  
հրաւիրել, յորդորել և թախանձել Մեր առաքելական  
և հայրական սիրոյն ամենայն զօրութեամբն ։ Նորա-  
ծին յուսոյն օր ըստ օրէ աւելի արծարծին կարի իսկ  
հեշտ եղաւ Մեզ, և հաստատ որոշած ենք մեծաւ

փութով հետամուտ ըլլալ այդքան փրկաւէտ դործոյ մը, որպէս զի ինչ որ Առաքելական Ս.թոռոյն յառաջատես խնամակալութենէն կարելի է ակն ունել, լի բովանդակ կատարենք՝ ոչ միայն ատելութեան և կամ կասկածանաց պատճառները բառնալով, այլ և հաշտութեան ամէն լաւագոյն միջոցները հայթհայթելով։

Ամենակարեւոր կը համարինք Մեր մտադրութիւնն և խնամքն նուիրել անվթար պահպանութեան Արեւելեայց սեփական եկեղեցական կարդատորութեան՝ զոր միշտ մեծապէս պատուած և յարդած ենք։ Վասն որոյ արդէն Մենք այդ ազդաց կղերիկոսաց համար նորահասատա կրթարաններուն պատուէր տուինք և պիտի տանք, նոյնպէս այսուհետեւ հաստատուելիքներուն՝ որ աշակերտներն ամենամեծ երկիւղածութեամբ սորվին և պահեն իրենց ծէսերն և անոնց գիտութեան և գործածութեանը մէջ կրթուին և վարժուին։ որովհետեւ արեւելեան ծխից պահպանութեանը մէջ կարծուածէն աւելի կարեւորութիւն կայ։ Ապաքէն մեծափառ հնութիւնն՝ որով այդ ծխից այլ և այլ տեսակները կ'ազնուանան, թէ՛ զարդ է մեծապայծառ ընդհանուր եկեղեցւոյ և թէ՛ կաթուղիկէ հաւատոյ աստուածային միութիւնը կը հաստատէ։ վասըն զի անով՝ մինչդեռ արեւելից գլխաւոր եկեղեցիներուն առաքելական ծագումն աւելի ակներեւ ի յայտ կուգայ, միանդամայն անոնց՝ անդստին ի սկզբանէ հետէ Հռովմէական եկեղեցւոյն հետ կատարեալ միութիւնը կը տեսնուի և կը փայլի։ Ոչ ինչ թերեւս Կարողիկութեան նշանակն Աստուծոյ եկեղեցւոյն մէջ աւելի սքանչելապէս կը լուսաւորէ, քան այն մասնաւոր մեծարանքն՝ զոր անոր կը մատուցանեն սյլակերպ արարողութեանց ձեւերն և նոյն խակ Առաքելոց և Ս. Հարց գործածութեամբն ազնուածոյն հանդիսացեալ հնութեամբ աղնուական լեզուները, գոգցես ըստ նըմանութեան այն մեծաշուք մեծարանաց՝ որ նորածին Քրիստոսի Եկեղեցւոյ աստուածային հեղինակին՝ ընծայուեցան, երբ մոգերն Արեւելից այլ և այլ կողմերէն

մեկնելով եկին . . . երկիր պազանել նմա (\*)։ Այս տեղպարտ և պատշաճ է դիտել թէ սրբազան ծէսքն՝ թէպէտ և յինքեանց կաթողիկէ վարդապետութեանց ճշմարտութիւնն ապացուցաներու համար հաստատուած չեն, սակայն զանոնք դրեթէ կենդանի կը պատկերեն և պայծառապէս կը յայտնեն. վասն որոյ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին՝ ինչպէս մեծապէս կը ճգնի անվթար պահելու այն վարդապետութիւնները, զորս իրբեւ աստուածայինո՝ անփոփոխելիս ընդունած է, ոոյնպէս անոնց ձեւերուն կիրառութեանը մէջ նոր ինչ կը չնորհէ և կամ թոյլ կուտայ երբեմն, մանաւանդ այն բաներուն մէջ որոնք պատկառելի հնութեան համաձայն են։ Այսպէս նաև թէ՛ Եկեղեցւոյն անծերանալի, անմահ կենաց ոյժն ի յայտ կուգայ և թէ մեծալյելուչ փառաւորութեամբ գերազանց կը հանդիսանայ նոյն ինքն հարսն Քրիստոսի՝ զոր Ս. Հարց իմաստութիւնը գոգցես իմն ստուերագրեալ ճանչցաւ Գաւթեան պատգամին մէջ։ Կացցէ դշխոյ ընթ ազմէ եռում; ի նանդերձան սկիենուս զարդարեալ եւ պանունեալ . . . ի վերջաւորս ոսկենուս զարդարեալ եւ պանունեալ։ (\*\*)

Արդ որովհետեւ արեւելեան արարողութեանց եւ կարգաւորութեան իրաւամբք ընդունուած զանազանութիւնը, ուրիշ առաւելութիւններէ զատ, Եկեղեցւոյ այդքան շուք եւ օգուտ կ'առթէ, ոչ ինչ նուազ անկ է Մեր պաշտաման փոյթ տանիլ ըստ արժանույն որ չըլլայ թէ անխորհրդաբար անպատեհ ինչ մուծուի Աւետարանի արեւմուեան պաշտօնայներու կողմէն՝ զորս Քրիստոսի սէրն այն ազգերուն կը մզէ՛ Հաստատուն կը մնան ապաքէն այն կարգագրութիւնները՝ զորս մեր մեծանուն Նախորդն Բենեգիկոս Ժ. այս մասին իմաստութեամբ և յառաջատես խորհրդով սահմանեց իւր Տեմանեադամ Այս մանագրութեամբն՝ զոր ի ձեւ թղթոյ ուղղած է,

(\*) Մատու. Բ. 1-2.

(\*\*) Սառչ. ԽԴ.

ի 24 Դեկտեմբերի, յամին 1743, առ Պատրիարքն  
Յոյն Մելքիդաց Անտիոքայ և առ ամենայն Եպիսկո-  
պոսունս նոյն ծիսի՝ որք սոյն Պատրիարքին իրաւա-  
բանութեան ներքեւ կը դանուէին։ Բայց սակայն յըն-  
թաց երկայն ժամանակաց այն տեղերուն իրաց վի-  
ճակին փոխիման և լատին քարողչաց և հաստատու-  
թեանց բազմանալուն պատճառաւ, կարեւոր դատ-  
ուեցաւ Առաքելական Աթոռէն այս նկատմամբ ինչ ինչ  
առանձինն խնամքներ հայցել՝ զոր և Մեք ինքնին  
արդարեւ այս վերջին տարիներուն մէջ, յաճախադէպ  
առիթներէ, կարի խոկ պատշաճ ճանչցանք, և զոր Մեք  
Մեծարոյ եղբարց՝ արեւելեան Պատրիարքաց՝ բազում  
անդամ Մեղիսյանած արդարացի իդներն հաստատած  
էին։ Եւ որպէս զի բոլոր այս խնդիրն աւելի յատակ  
կերպով պարզուի և խնամածութեան յարմարագոյն  
միջնուները սահմանուին, հաճեցանք փոքր ինչ յառաջ  
նոյն Պատրիարքներն ի բազաքս առ Մեզ կոչել՝ անոնց  
հետ խորհրդակցելու համար։ Ապա զանոնք մեր սի-  
րեցեալ Որդւոյ Ս. Հռովմէական Եկեղեցւոյ կարդի-  
նալներէն ուսնոց հետ՝ ստէպ ստէպ Մեք առջև ի խոր-  
հուրդ գումարեցինք և միաբանութեամբ առաջար-  
կուած և յուղուած բոլոր խնդիրներն ուշի ուշով քաջ  
կշռելն ետքր՝ որուցեցինք աւելի բացայացա ընել եւ  
ընդարձակել նոյն բնենեղիկանան Սահմանագրութեան  
ինչ ինչ պատուէրներն, այդ ազդաց նոր հանդամա-  
նաց համեմատ։ Այս նպատակաւ՝ սոյն Սահմանագ-  
րութենէն զայս իրո սկզբունք քաջեցինք՝ թէ Առա-  
քելական Աթոռը լատին քահանայներն այն միաքով  
միայն այդ երկիրները կ'առաքէ, որպէս զի Պատրի-  
արքաց և Եպիսկոպոսաց ըլլան յօգնութիւն եւ ի սփոխա-  
նքս. վասն որոյ զգուշանալու են՝ զի մի զուցէ իրենց  
շնորհեալ իշխանութեանց զորձածութեամբն անոնց իրաւանց  
վնաս հասցնեն եւ անոնց հպատակաց թիւր նուազցնեն (\*),  
յորմէ յայտ յանդիման կ'երեւի՝ թէ նոյն լատին քա-

հանայից պաշտօնն Արեւելեան Նուիրապետութեան  
հանդէպ ո'րպիսի օրէնքներով կարդաւորուած է։

Ուստի հարկ թուեցաւ մեզ հետեւեալ պատուէր-  
ները սահմանել և վճռել ի Տէր, որպէս և կ'ընենք,  
Մեք Առաքելական Խշանութեամբն, այժմէն իսկ  
յայտարարելով թէ կ'ուղենք և կը հրամայենք զի նոյն  
Բենեղիկան վճիռք՝ որ նախ Յոյն Մելքիդաց համար  
արուած են՝ յԱրեւելա դանուող ո'ր և է ծիսէ ամե-  
նայն հաւատացելոց առհասարակ պատկանին։

1. Ուր և է լատին քարողիչ՝ աշխարհական կամ  
կրօնաւորական կղերէ, որ խրատով և կամ սատարու-  
թեամբ՝ ո'ր և իցէ արեւելեան մը լատին ծէսն ըն-  
դունել կը դրդէ, բայց ի կախակայութենէ յասուածանոց՝  
ընդ որով նովին զործով պիտի իյնայ, և ուրիշ նոյն Տէ-  
մանսադամ Սահմանագրութեամբ սահմանեալ պատիժ-  
ներէ, պիտի զրկուի և մերժուի նաեւ իւր պաշտօնէն։  
Եւ որպէս զի այս պատուէրը յայտնի եւ հաստատուն  
մնայ, կը հրամայենք զի անոր օրինակը լատին Եկե-  
ղեցեաց մէջ հրապարակաւ ի տես դրուի։

2. Ուր իւր ծիսէն քահանայ մը չդանուի, որուն  
արեւելեան Պատրիարքն յանձնել կարենայ իւրայնոց  
հոգեւոր մատակարարութիւնը, հոն անոնց հոգն այլ  
ծիսէ ժողովրդապետ մը պիտի ստանձնէ՝ որ անոնց  
պէս սրբագործութեան համար նոյն տեսակները, այս-  
ինքն բաղարջ կամ խմորեալ կը դործածէ։ բայց պի-  
տի նախագասուի այն ժողովրդապետն՝ որ զանոնք ըստ  
արեւելեան ծիսի կը դործածէ։ իսկ հաւատացելոց  
արտօնութիւն շնորհուած է ըստ մի կամ միւս ծիսի  
հաղորդուելու, ոչ միայն այն տեղերն՝ ուր իրենց սե-  
փական ծիսէն ո'չ Եկեղեցի և ո'չ քահանայ կը դըտ-  
նուի, որպէս տարածման հաւատոյ Ս. Ժողովը վըճ-  
ռած է յամին 1893 յ/18 օդոսոտոսի, այլ և այն տեղերն՝  
ուր հեռաւորութեան պատճառաւ՝ չեն կրնար իրենց  
Եկեղեցին երթալ առանց մեծ դժուարութեան, եւ  
զայս որոշելն իւրաքանչիւր վիճակաւորի անկ է։ Եւ  
այս հաստատուն մնայ թէ ո'ր և է մէկն՝ թէպէտ և

(\*) Սահմ. Տէժանդադամ, թիւ 13.

ընդ երկար ըստ այլ ծխի հաղորդուած ըլլայ, ասով իւր ծէսը փոխած պիտի չհամարուի, այլ ուրիշ ամենայն պաշտամանց մէջ միշտ իւր ժողովրդապետին իրաւաբանութեանը պիտի պատկանի:

3. Լատին կրօնաւորական Միաբանութիւնք՝ որք յԱրեւելս երիտասարդաց գաստիարակութեանը կը պարապին, եթէ վարժարանի մը մէջ Արեւելեան ծիսին պատկանող ոչ սակաւ թուով աշակերտաներ ունենան, անոնց դիւրութեանը համար՝ Պատրիարքին հետ խորհրդակցելով՝ քահանայ մը պէտք է որ ունենան իրենց քով, որ պատարագ մատուցանէ, անոնց Ս. Հաղորդութիւն տայ, իրենց մայրենի լեզուաւ Քրիստոնէական վարդապետութիւնը սորվեցնէ և ծէսերը մեկնէ, կամ գոնէ կիւրակիէ և այլ հրամայեալ տօնի օրերը, նոյն ծիսէ քահանայ մը կոչեն՝ որ այն պաշտօնները կատարէ: Ուստի ո՞ր և իցէ՝ մասնաւոր յիշատակութեան ևս արդանի՛ առահեճնաշնորհութիւնք՝ զորոնք այդ Միաբանութիւնները կը վայելեն, և որոնց համեմատ Արեւելեան ծիսէ աշակերտք, ցորչափ իրենց վարժարաններուն մէջ կը բնակին, լատին ծիսին կը հետեւին, անսնք ամէնքն ալ չնշուած կը յայտարարենք: Իսկ ծիսական պահոց տահպանութեանը մասին՝ նոյն վարժարանաց տնօրիններն պէտք է որ երկիւղած զգուշութեամբ հոգ տանին: Արտաքին աշակերտաց նկատմամբ եւս պէտք է նոյնպէս փոյթ ունենալ և հարկ է զանոնք իրենց ուժիական եկեղեցիներն և կամ եպիսկոպոսարանն առաքել կամ տանիլ, եթէ պատշաճագոյն չգատուի զանոնք ներքին աշակերտաց հետ մի և նոյն ծիսի պաշտամանց մասնակից ընել:

4. Այս պատուէրներն որչափ հնար է, պիտի յատկացուին կուսանաց Միաբանութեանց, որք վանաց և վարժարանաց մէջ օրիորդաց գաստիարակութեան զիրենք նուիրած են: Եթէ ժամանակաց և պարագայից համեմատ պատշաճ փոփոխութիւն մը ընել հարկ ըլլայ, առանց Պատրիարքին հաւանուած:

Թեանն և Առաքելական Աթոռոյն թոյլտուութեանը պիտի չդորձադրուի այն:

5. Երիտասարդաց համար՝ լատին ծիսէ նոր վարժարաններ կամ կրօնաւորաց և կուսանաց վանատուններ պիտի չբացուին այսուհետեւ, առանց Առաքելական Աթոռուէն հրաման խնդրելու և ստանալու:

6. Թէ՛ լատին և թէ՛ Արեւելեան քահանայից չէ օրէն ո՛չ իրենց և ո՛չ ուրիշ ծիսէ եկեղեցեաց մէջ արձակել որ և է մէկն այն դէպքերէն՝ որոնք իրենց սեփական Վիճակաւորէն վերապահուած են, եթէ անկէ առ այս իշխանութիւն չունենան: և յայսմ, որ և է թէկէ առանձինն յիշատակութեան արժանի՝ առանձնաշնորհութիւնները բոլորովին կը ջնջենք:

7. Արեւելեայց՝ որք քահանայապետական հրամանադրով իսկ լատին ծէսն ընդունած են, թոյլտրուած է իրենց նախկին ծիսին վերադառնալ, եթէ Առաքելական Աթոռուէն խնդրեն զայն:

8. Լատին ծիսէ կինն՝ եթէ արեւելեան ծիսէ անձի մը հետ ամուսնանայ, և կամ արեւելեան ծիսէ կինը լատինի հետ ամուսնանայ, աղատ է իւր ամուսնոյն ծէսն ընդունելու թէ՛ պսակուելու ժամանակ և թէ՛ ամուսնութեան տեւած միջոցին մէջ: Իսկ պսակը լուծուելէն եաքն՝ աղատ է վերստին իւր ծիսին վերադառնալու:

9. Պատրիարքութեան սահմանէն գուրս բնակող որ և է արեւելեան՝ լատին կղերին մատակարարութեան ներքեւ պիտի գտնուի. սակայն իւր ծիսին մէջ արձանագրուած պիտի մնայ, այնպէս որ՝ հակառակ երկարատեւ բնակութեան և կամ որ և է այլ ինչ պատճառի՝ գարձեալ Պատրիարքին իշխանութեան պիտի ենթարկուի, երբ անոր սահմանը վերադառնայ:

10. Լատին ծիսէ երկուց սեռից որ եւ է կրօնաւորական կարգի կամ Միաբանութեան թոյլտուեալ չէ ընդունիլ իրենց միաբանից մէջ Արեւելեան մը՝ որ կանխաւ իւր սեփական Վիճակաւորին ընծայական թուղթը մատուցած չըլլայ:

11. Եթէ չմիացեալ արեւելեան հասարակութիւն կամ ընտանիք կամ անձ մը դառնայ կաթողիկէ միութեան, իբր անհրաժեշտ պայման գնելով թէ լատին ծէոը պիտի ընդունի, սոյն ծիսին յարեալ մնայ առժամանակեայ կերպով. սակայն օր մը իւր հայրենի կաթողիկէ ծիսին վերադառնալու աղատութիւնն ունենայ, իսկ եթէ այսպիսի պայման մը դրուած չըլլայ, և արեւելեան քահանայ չդժոնուելուն համար՝ այդ հասարակութիւնը, ընտանիքը կամ անձը մատակարարուած ըլլայ լատին քահանայներէն, պարտի իւր ծիսին վերադառնալ արեւելեան քահանայ մը հոն դալուն պէս:

12. Որ և է ամուսնական և եկեղեցական խընդիրք՝ որոնց համար առ Առաքելական Աթոռն բողոքեղած է, չեն կրնար բնաւ Առաքելական նուիրակաց ատենին յանձնուիլ յորոշողութիւն, եթէ ոչ բացայայտ հրամանաւ նորին Առաքելական Աթոռոյ, այլ բացարձակապէս պիտի ներկայացուին հաւատոյ ջարածման Ա. Ժողովը:

13. Յոյն Մելքիդ Պատրիարքին կը շնորհենք իրաւաբանութիւն նոյն ծիսէ բոլոր հաւատացելոց վրայ, որք Օսմանեան կայսրութեան սահմանաց մէջ կը բնակին:

Այս մասնաւոր զգուշական պատուերներէ և յիշաւանց հրամայեալներէն զատ՝ մեծապէս կը փափագինք՝ ինչպէս ի վեր անդ ակնարկեցինք, որ Արևելից պատշաճագոյն տեղերը կղերանոցներ, վարժարաններ և ամէն տեսակ հաստատութիւններ հիմնուին՝ որք բոլորովին սահմանեալ ըլլան բնիկ պատանիներն իրենց հայրենի ծիսիւ կրթելու, յօժանդակութիւն իրենց աղդակցաց։ Որոշած ենք ձեռնարկել փութով այս խորհրդոյս՝ որ լի զեղուն է կրօնքին համար այնքան անձառելի յօյսերով և յառաջ վարել զայն տեւական նպաստիք, եթէ՝ ինչպէս վաստահ ենք, յաճախեն պարզեւք կաթողիկեայց։ Մեր անցեալ տարի Արևելեան Հնդկաստանի մէջ հաստատուելիք կղերանոցաց առթիւ գրած Շրջաբերական թղթոյն մէջ ընդարձակագոյնս ցուցուցինք, թէ տեղական բնիկ քահանայից

պաշտօնն՝ որովհետեւ աւելի պատշաճ կերպով կը կատարուի, և աւելի յօժար կամօք կ'ընդունուի, շատ աւելի արդիւնաւոր է քան թէ օտարացն։ Այսպէս կղերիկոսաց դաստիարակութեանն անգամ մը հոգտարուելէն ետքն, անշուշտ Արևելեայց մէջ Աստուածաբանական և Ա. Գրոց ուսմանց պատիւը պիտի աճի, պիտի ծաղկին հին լեզուաց հմտութիւնն և նորերուն կիրթ վարժութիւնն և վարդապետութեանց և դպրութեանց գանձերն՝ որովհերենց չարք և մատենագիրք կ'առաւելուն, յորդագոյնս պիտի զարդանան յօդուտ հասարակաց, և ուր ուրեմն ի լուութիւն պիտի կարենայ գալ այն մեծ փափագն՝ որ կաթողիկէ Քահանայութիւնը գերազանց գիտութեամբ և անարատ օրինակաց հանդիսիւ պայծառանալով, բաժանեալ եղբարք աւելի յօժարամիտ գիմենի գրկախառնութիւն մի և նոյն մօր։ Այն ատեն, այս՝ եթէ կղերական կարգերն իրենց սրտերն, աշխատանքն և դործունէութիւնը ճշշմարիտ եղբայրական սիրով միացնեն, անշուշտ, շնորհօք և օգնականութեամբն Աստուծոյ, պիտի կանխէ այն բարենշան օրն՝ յորումամէնքն փութալով ի միամուրիւն հաւատոց և զիտուրեան Որդուն Աստուծոյ, լիապէս և կատարելապէս պիտի լրանայ Առաքելոյն խօսքն՝ Ամենայն մարմինն յօդեալ եւ պատշանեալ ամենայն խաղալեօֆ տարաքերութեան բացիցտութեան՝ չափով բացից իւրաքանչյուր մասին, զանումն մարմնոյ գործէ ի շինուած անձին իւրոյ սիրով<sup>(1)</sup>։ Այն եկեղեցին միայն կրնայ պարծիլ ապաքէն թէ Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին է, յորում պատշաճագոյնս կը զօդին մի մարմին եւ մի հոգի։<sup>(2)</sup>

Զենք տարակուսիր բնաւ թէ Մեր Մեծարոյ Եղբարք՝ որ և է ծիսէ կաթողիկեայ Պատրիարքք, Արքեպիսկոպոսնք և Եպիսկոպոսունք, թէ իրենց առ Առաքելական Աթոռն և առ Մեղնանձայած ջերմեռանդն սիրոյն և թէ այն հոգատարութեան պատճառաւ՝ զոր

(1) Եժ. Դ. 13-16 :

(2) Եայ. Դ. 4.

ունին իրենց Եկեղեցւոյն համար, ամենայն ակնածութեամբ և հնազանդութեամբ պիտի ընդունին Մեր այս ընդհանուր և մասնաւոր վճիռներն և մեծ փութով պիտի ջանան որ լիուլի պահուին անոնցմէ՝ որոց կը պատկանին. բայց առատութիւն պտղոց՝ զորս արժանէ և անտի ըղձալ և ամենայն իրաւամբք սպասել, ձեռք պիտի բերուի նա՛ մանաւանդ անոնց վաստակովն՝ որք Մեր անձը կը ներկայացնեն ի.քրիստոնեայ Արևելու Վասն այսորիկ պնդադոյնս կը յանձնարարենք Առաքելական Նուիրակայ՝ որ պարտուպատշաճ պատուվ յարդեն այդ աղքաց ինախնեաց անտի աւանդեալ կարգերն և կանոնները, Պատրիարքաց իշխանութիւնն արժանաւոր յարդանօք մեծարեն, և հոդ տանին՝ որ մեծարուի, եւ անոնց հետ մեծարանաց փոխանակութեան մէջ ի գործ դնեն Առաքելոյն խրատն ի պատիւ զիմեամբք ելամել (¹). Եպիսկոպոսաց, կղերին և ժողովը կը կանքան փոյթեռանդն և բարեսէր յօժարութիւն մը ցուցունեն յանձննս բերելով նոյն հոդին, որով Յովհաննէս Առաքեալը կը վարէր, երբ Յայանութիւնը տուաւ առ եօրն եկեղեցին՝ որ են յևիս, այս ողջունիւ ընորին ընդ եւ խաղաղուրիւն յևսուծոյ յեն եւ որ են եւ որ գալոց է (²). Եւ իրենց ամէն ընթացից մէջ զիրենք այնպիսիս երեւցնեն՝ որ արժանի պատգամաւորք եւ հաշտարարք համարուին սրբոյ միութեան ընդ մէջ Արեւելեան Եկեղեցեաց եւ Հոռվմէականին՝ որ կեդրոն է նոյն միութեան եւ սիրոյ ։ Նոյն զդացմունքն ունենան եւ նոյնը գործեն Մեր յորդորանօք եւ հրամանաւ ամէն լատին քահանայք՝ որք այն երկիրներուն մէջ հոգւոյ յաւիտենական փրկութեան համար աղնիւ եւ պատուական աշխատութիւններ յանձըն կ'աւնուն։ Եւ յայնժամ ի հնազանդութեան Հըռովմէական Քահանայապետին բարեպաշտութեամբ աշխատողներուն Աստուած պիտի տայ ապաքէն աճում յորդաւատ։

(¹) Հայութ. ԺԲ. 10 :

(²) Յայրն. Յակով. Ա. 1:

Ուստի ինչ որ Մեր այս թղթով կը սահմանենք, կը յայտարարենք եւ կը վճռենք, կ'ուզենք եւ կը հրամայենք՝ որ անվթար պահուին ամէն անոնցմէ որոց անկն է, եւ չէ ներեալ զանոնք ստուանել, վիճաբանութեան ներքեւ ձգել եւ զանց ընել, ո՛ր եւ իցէ նաև արտօնացեալ պատճառաւ, պատրուակաւ կամ անուամբ, այլ կ'ուզենք որ լի կատարեալ գործադրուին ընդգէմ Առաքելական Սահմանադրութեանց, նաև յընդհանուր կամի գաւառական ժողովս վճռելոց, որպէս և ընդգէմորոց և իցէ այլ զօրութեամբ հաստատեալ օրէնսդրութեանց, սովորութեանց և պատուիրանաց՝ զորս զամեննեսեան, իրը այն թէ այս թղթոյս մէջ բան առ բան նշանակեալ ըլլային, որպէս նաեւ զայլ ամէնն՝ որ այսմ կը հակառակի, յատկապէս և յատնապէս կը խափանենք եւ կ'ուզենք որ խափանեալ մնան, ի լիուլի գործադրութիւն Մեր վերոյդրեալ հրամանաց։ Կ'ուզենք եւս որ այս թղթոյն, նաեւ տպագրեալ և նօտարի ստորագրութեամբ եւ աստիճանաւոր Եկեղեցականի մը կնքով վաւերացեալ ամէն օրինակներուն նոյն հաւատքն ընծայուի, ինչպէս ի տես բուն այս ներկայ թղթոյն։

Տուեալ ի Հռովմ, առ Մրբոյն Պետրոսի, յամի Մարդեգութեան Տեառն՝ հազարերորդի ութիւնարիւրորդի իննաներորդի չորրորդի, ի նախընթաց աւուր Կաղանդի Պետրոսի Եկեղեցերի (30 նոյեմ. Ն. Տ.), յեօթնեւտասներորդ ամի Քահանայապետութեան Մերոյ։

ԿԱՐԴԻՆԱԼ Ա. ՊԻԱՆՔԻ

ՓՈԽ-ԴԻՎԱՆԱՊԵՏ

ՏԵԱՆԱԼ

Տ. ԱԳՈՒԻԼԱՆ

ԿԱՐԴԻՆԱԼ Զ. ՏԵՐՈՒՃԻՒՔԻ

ՏԵՂԻ ԿԱՆԱ

ԱՐ ՃԱՅԱԳՐԵԱԼ Ի ԳԻՒԱՆԻ

ՀԱՄԱԿՈՍԱԳՐՈԳ

Ի. ԳՈՒՆԵԹՈՒ



Ի հաստառութիւն հաւատարմութեան հայերէն բարգմանութեան ի լատին բնագրէ :

ԲԵՐՄ Կ. ՊԱԼԱՅ, ԿԱՐԱԳԻՆՎԱՐԱՆ, 10/22 ՓԵՄՐԱ-ՄՐ 1895



ՍՏԵՓԱՆՈՒ ՊԵՏՐՈՎ Ժ.

**ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ԿՐԼԻԿԻՈՑ**

## «Ազգային գրադարան»



NL0030349



3294